

ութէն ինչուան տասուերկու օր կը մնան ջրին մէջ . իսկ հունտ ունեցողները գէթ տասնըհինգ օր կը թողուն ջրին մէջ, որովհետեւ արեւուն մէջ երկայն ատեն կենալով խէժը կրկարծրանայ ու դիւրաւ չուծուիր . վազուկ ջուրը աւելի աղէկ է : Հունտ չունեցող կանեփը որ հասունցած ատենը քաղուած է՝ հինգ օր միայն ջրի մէջ թողուլ է երբոր օդին տաքութիւնը Սէնտիւրի ջերմաչափով 20° է . շատ հարկաւոր բան է՝ որ քանի որ թելերը փտած չեն՝ խէժը լուծուի :

Չրէն հանելուն պէս պէտք է որաները քակել ու դաշտի մէջ տարածել որ չորնան . թէ որ աղէկ հով փչէ, եօթը ութը օրուան մէջ կը չորնայ . երբոր կը նայիս որ աղէկ մը չորցեր է՝ խոշոր որաներ կապէ, ու տար շտեմարանին մէջ դիզէ :

Պեղձը՝ երկայն արէն պահելու հնար :

Պեղձը, թթանի խծուծի՝ մէջ պըլլէ, ու ետքը հալած դեղին մեղրամովի մէջ թաթխէ ու դուրս հանէ : Սեղրամովը թթանին վրայ կձեպի պէս չորնալով՝ չեղուր որ դրսի օդը դեղձին զարնուի . աս կերպով երկայն ատեն դեղձերը առանց փտելու կը մնան, միայն թէ դրած տեղը չոր պիտի ըլլայ : Սրիչ սր և իցէ պտուղներ ալ աս կերպով կրնան պահուիլ, ինչպէս նաև հաւկիթը :

Սեխը՝ ինչուան դեկտեմբեր և յունուար ամիսները պահելու հնար :

ՐՇՆԱՆ ետքերը ելած սեխերէն առ՝ քանի որ չեն հասունցած, լաթով աղէկ մը սրբէ ու չորցուր, և մէկ եր-

1 Ըեֆուսի : 2 Իսպի-իի : 3 Գալուսի :

կու օր չոր տեղ մը դիր : { Ետոյ շատ մը մոխիր առ՝ մաղէ, որպէս զի ածուխին մճիրները զատուին . ետքը ան մաղած մոխիրը աղէկ մը չորցուցած տակառի մը մէջ լեցուր, և ասոր մէջ թաղէ սեխերը . բայց նայէ որ ամէն կողմէն ալ ծածկուին, ու տակառին փայտին չգըպին . աս ալ դիտէ որ տակառը այնպիսի տեղ չգրուի որ կարենայ սառիլ : Երբոր պէտք ըլլայ գործածել, կը տեսնես որ շատ աղէկ պահուեր են սեխերը առանց փտելու՝ ինչուան դեկտեմբեր և յունուար ամիսները :

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Փայֆոն կամ Էհի արծաթ :

ՉԻՆԵՐԸ ուրիշ շատ գիւտերէն զատ՝ աս գիւտս ալ հնարած են, որ մէկ քանի մետաղ, այսինքն նիքել, զինք ու պղինձ, երբեմն ալ նաև կապար ու երկաթ մէկտեղ բաղադրելով՝ նոր տեսակ ձերմակ մետաղ մը հանեցին՝ փայֆոն անուանով, որ արծրթի պէս մաքուր ու փայլուն կ'ըլլայ . և հիմա Եւրոպացիք ալ կը շինեն ասկէ դրգալ, ափսէ, պատառաքաղ, դանակի կոթ, և այլն : Բայց աս գործիքներուն բաղադրութեան ամենուն նուսխան նոյնպէս չէ . զոր օրինակ դրգալին ու պատառաքաղին նուսխան է

Նիքել	0,25
Չինք	0,25
Պղինձ	0,50

Պանակի կոթի, թառախի՝, ևն,

Նիքել	0,22
Չինք	0,23
Պղինձ	0,55

Փայֆոնը թիթեղի պէս թերթ թերթ շինելու համար պէտք է

Նիքել	0,20
Չինք	0,25
Պղինձ	0,55

1 Մոճ Նագուր :